նեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի՝ զարմանագործ[1]
տեսմամբ ստեղծագործե՛լ ջոկադրէ և ի կարգս եկե-
ղեցւոյն զհոլովս էրի անասնոցն և զերամս հաւոց,
միանդամայն և դասս[2] գազ՚նաց, խոզից և ոռիւծոց,
5 ցլուց և արջոց ընդդէմ[3] միմեանց[4] զարդարեալ, յա-
ռաջն զներքին

29. զներքին[5] զօտին կազմեցին. շրջապատ եկեղե-
ցւոյն պանձալի մանր[6] նղաշ քար յօրինեալ կազմե-
ցին. եւ ապա զմարդ և զանասուն յօրինե՛լ։ եւ[7] մի-
10 ջին զոտին յօրինե՛լ նկարէ պատկերս մարդոյ[8] և[9]
անասնոյ արջոյ, որթոյ խաղողոյ, այգեպանով և գա-
զանօք և սողնօք, որոց և կերպարանքն այլ և այլ զա-
նազանութ՚ի մի մի զիւրաքանչիւր պատկեր[10] այնպէս է
կազմել, որ մարդ տեսանէ, իսկոյն հիանա. մարդ
15 գիտէ թէ ամէն[11] կենդանի են ամէն։ Իսկ ի դ՚, ճա-
կատ եկեղեցւոյն ի վ՚ր գագաթան սրբուե՛ցն նկարե՛լ
կազմե՛ց[12] զ՚դ, աւետարանչաց[13] պատկերս, որք և
արժանաւորապէս իսկ են պսակ ուրախութե՛ ս՚բյ
եկեղեցւոյ և[14] վերագոյն քան զա՚մ ս՚բս։ Նկարագրէ
20 տ՚նագրելով և զփրկչական[15] պատկերն, որ վ՚ս մեր[16]
զգեցաւ մարմին

---

1 Ձ. նխպ. զարմանագործե՚լ, ի՚լ ջնջուած.
2 Ձ. Շ-րդ u տղմ. 3 Ձ դեմ տղմ.
4 Ձ. նխպ. միմիանց.
5 Ձ. զներին.
6 Ձ. նխպ. մանդ(r), ջնջ. նշ.
7 Ձ. ե կրմ.
8 Ձ. դ տղմ.
9 Ձ. եւ-ից յետոյ մար ջնջ նշ.
10 Ձ. կ տղմ.
11 Ձ. նխպ. ան փոխ. ամ(էն), հաւանօրէն բրբ. արտասանութիւն (*անմէն) ազդեցութեան տակ։
12 Ձ. մ տղմ. նօտրգ.
13 Ձ. աւեաարնչաց 14 Ձ. եւ-ից յետոյ վայել ջնջ. նշ.
15 Ձ. զ տղմ. 16 Ձ. մերն